

Լրատու

Լոյս կը տեսնէ 2006 թ. Սեպտեմբերին

Թիւ 1

Կիպրոսի Յամայնքի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակի

ՅՈՒՆԻՍ 2011

Սիրելի հայրենակիցներ,

Դայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչի 22 Մայիս 2011-ի ընտրութիւնը, որուն նախօրեակին, ընտրապայքարի բերումով, գաղութեն ներս ստեղծուած էր անհաճոյ ու ալեկոծ իրավիճակ մը, վերջ գտաւ Կիպրահայութեան հաստատ դիրքորոշումով եւ յաջողութեամ տոկոսի հսկայական տարբերութեամբ: Յաջողութիւն մը, ինչպէս իրապարակաւ յայտնեցի, կը պատկանի բոլորիս, եւ կը պարտաւորեցմէ որ խղճնորութեամբ, բժախմդորութեամբ ու մեծ պատասխանատուութեամբ շարունակեն հինգ տարիներ առաջ սկսած գործունելութիւնս:

Ուրախ եմ յայտնելու, թէ ընտրութիւններէն անմիջապէս ետք, Կիպրահայութեան առօրեայ կեանքը մտաւ իր բնականոն հունին մէջ եւ յետ-ընտրական շրջանին կը տիրէ հանդարտ ու հանդուրժողական ոգի: Այս մէկը կը փաստէ, թէ ստեղծուած կացութիւնը ո՞չ միայն շինժու էր ու անհիմն, այլ անտեղի ցեխարձակուններու եւ զրպարտութիւններու միջոցով, կարգ մը անձեր փորձեցին պղտորել գաղութի անհատներուն միտքերը, որոնք սակայն չաջողեցան:

Մամլոյ 24.05.2011 բուակիր հաղորդագրութեամբ մը, սրտագին շնորհակալութիւններս յայտնեցի բոլորին անխտիր, որուն պատճենը արտատպած ենք «Լրատու»ի այս թիւով:

Ինչպէս նշմարեցիք, ձեզի կը ներկայացնեմ մեր փոքր գաղութեն ներս գեղեցիկ սովորութիւն դարձած եռամսեայ «Լրատու»ն թարմացած դիմագիծով, որ կու գայ յիշեցնե-

լու, թէ մեր գրասենեակի տեղեկատուն ալ թեւակոխեց իր երկրորդ հնգամեակը եւ պիտի շարունակէ լոյս տեսնել հերթականութեամբ, միշտ տեղեակ պահելով ծեզի գաղութի իրադարձութիւններուն եւ կատարուած աշխատանքներուն մասին: Անգլերէն լեզուով ամփոփ թարգմանութիւնն ալ, ինչպէս անցեալին, պիտի գտնէք www.cyprusarmenians.com կայքէջին մէջ:

Քաղաքական գրասենեակիս աշխատանքները կ'ընթանան հեզասահ կերպով եւ նոյն անձնակազմով: Յոս կ'ուզեն նշել, թէ խորհրդարանական գրասենեակիս գործակիցը՝ Տիկ. Կապրիէլլա Պետրիստուն, որուն սրտագին յաջողութիւն կը մաղթեն, կամովին հրաժարած է պաշտօնէն, 23 Մայիս 2011-էն սկսեալ զինք փոխարինած է Տիկ. Սթալօ Նիքոլաու-Եագուպեանը:

Վերջին երեք ամիսներու գործունեութեան մասին անդրադարձած ենք «Լրատու»ի յաջորդող էջերով: Պիտի փորձենք մեր տեղեկագրութիւնը պահել կարծ ու ամփոփ, ծանծրոյթ չպատճառելու միտումով: Այս թիւին հետ, ներփակ պիտի գտնէք նաեւ Կիպրոսի Պետական Համալսարանի Յայերէն լեզուի դասընթացքներու նոր կրթական տարեշրջանի վերսկսման յայտարարութիւնը:

Խօսքիս վերջաւորութեան, մեծ հաճոյքով ծեզի կը փափաքիմ տեղեկացնել, թէ անցեալ տարուընէ աշխարհի շուրջ շրջապտոյտի ելած «Արմենիա» հայրենի նաւը, իր եօրը հոգինոց անձնակազմով՝ գլխաւորութեամբ Զօրի Բալայեանի, առաքելութիւնը աւարտելով Յինգշաբթի, 11 Օգոստոս 2011-ին խարիսխ պիտի նետէ Լիմասոլի նաւահանգիստը: Այս առնչութեամբ, ընդառաջելով ու գործակցելով Յունաստանի եւ Կիպրոսի մօտ ՀՀ դեսպանութեան հետ եւ ի մտի ունենալով, որ այս պատմական շրջապտոյտին աւարտը կը զուգադիպի Յայաստանի Յանրապետութեան անկախութեան 20-ամեակին, յատուկ դիմաւորման

արարողութիւն եւ միջոցառում տեղի պիտի ունենայ Լիմասոլի նաւահանգիստը, ներկայութեամբ երկու երկիրներու Նախագահներուն, քարձրաստիճան պետական եւ այլ անձնաւորութիւններու, ինչպէս նաև գաղութի անդամներուն: Այս մասին յատուկ թերթիկ մը ներփակած ենք «Լրատու»ի այս թիվին մէջ՝ կարգ մը մանրամասնութիւններ յայտնելու նպատակով:

Բոլորիդ մաղթելով խաղաղ, ապահով ու կազդուրիչ ամառնային արձակուրդ մը, իրաժեշտ կ'առնեմ ծեզմէ՝ լաւագոյն բարեմաղթութիւններով:

**Վարդգէս Մահտեսեան
Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ**

ԵՌԱՄՍԵՎՅ ԳՈՐԾՈՒՏԵՈՒԹԻՒՆ

**Ապրիլեան Եղեռնի
96-րդ ամեակի ոգեկոչման ձեռնարկներ**



Ինչպէս միշտ, այս տարի եւս, Կիպրոսի Ոգեկոչման Յանձնախումբի կազմակերպութեամբ՝ Մեծ Եղեռնի 96-րդ ամեակի ոգեկոչման ձեռնարկները սկիզբ առին Չորքշաբթի, 20 Ապրիլի արիւնատուչութեամբ, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի նախասրահին մէջ: Յինգշաբթի, 21 Ապրիլին, Պետական Յեռատեսիլի երկրորդ կայանեն (RIK2), սփռուեցաւ «Վերապողողները» վաւերագրական ժապաւենը: Երկուշաբթի, Ապրիլ 25-ի առաւտեան, Սուլբ Պօղոս Մատուռին մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն՝ 1.5 միլիոն նահատակներու յիշատակին, որուն յաջորդեց երեկոյեան ժամերուն աւանդական դարձած քայլարշաւը: Քայլարշաւեն ետք, Նիկոսիոյ Նահատակաց Յուշարձանին ոիմաց տեղի ունեցաւ կոկիկ հանդիսութիւն, գաղութեն ներս գործող կուսակցութիւններու ներկայացուցիչներուն եւ հայ համայն-

քի հոծ բազմութեան մը Ներկայութեան: Օրուան պատգամը փոխանցեց Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Սրբազան, որմէ Ետք, Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգես Մահտեսեան, ուղերձի իր խօսքով, շեշտեց «միասնաբար գործելու անհրաժեշտութիւնը» դիմագրաւելու մեր դեմ ցցուած արգելքները, որոնք կը միտին Յայ ժողովուրդը պառակտելով տկարացնել: Ս. Աստուածածին Եկեղեցւոյ երգչախումբը կատարեց շարականներու եւ օրուան խորհուրդը փոխանցող պատշաճ երգերու փունջ մը, որմէ Ետք ծաղկեպսակներ ու ծաղիկներ գետեղուեցան Նահատակաց Յուշահամալիրին առջեւ:

Զաջալերանքի արժանի էր այս տարի Փեռա Խօրիու եւ Նիսու Երկրորդական Վարժարանի հայ ուսուցիչ Պրն. Լե-



ւոն Գազանճեանի նախաձեռնութիւնը, որու ջանքերուն շնորհիւ, վերոյիշեալ Վարժարանէն ներս Երեքաբթի, 10 Մայիս 2011-ին, կազմակերպուեցաւ «Հայկական Ցեղասպանութիւնը Երեկուընէ մինչեւ այսօր» միջոցառումը՝ նուիրուած Եղեռնի 96-րդ ամեակին: Օրուան նախագահն ու բանախօսն էր Խորհրդարանի Նախագահ Մարիոս Կարոյեան: Ներկայութեամբ Կրթութեան եւ Մշակոյթի Նախարարութեան պաշտօնակատարներու, Կիպրահայ Պետական Ներկայացուցիչին, Նարեկ Վարժարաններու տնօրինութեան եւ հոգաբարձական կազմի անդամներուն, մասնակցութեամբ «Սիփան» պարախումբին, Սովորանո Սոնա Կարկալոյեանի եւ Երգիչ Յովիկ Տեմիրճեանի, զգայացունց այս ձեռնարկը մեծ տպաւորութիւն ծգեց 600 յոյն աշակերտներուն եւ ներկաներուն մօտ:

Պրն. Մահտեսեան յատուկ շնորհաւորագիր մը յղելով, շնորհաւորեց ի մասնաւորի Պրն. Լեւոն Գազանճեանը եւ բոլոր կազմակերպուները՝ այս բացառիկ ձեռնարկին յաջողութեան համար:

Ուխտագնացութիւն դեպի Մակարավանք



Կիրակի, 8 Մայիս 2011-ին, չորրորդ անգամ ըլլալով, Պետական Ներկայացուցիչի Գրասենեակի Եւ Ազգային Առաջնորդարանի կազմակերպութեամբ Եւ միացեալ շանթերով, տեղի ունեցաւ աւանդական դարձած ուխտագնացութիւնը դեպի Մակարավանք, Կիպրոսի Սիացեալ Ազգերու Կազմակերպութեան Վերահսկողութեամբ: Այս տարի մօտ 150 անձեր մասնակցեցան այս ուխտագնացութեան, Ներառեալ «Երկիր Մետիա» հեռատեսիլի Երկու հոգինց անձնակազմին, որ Կիպրոս կը գտնուեր Կիպրահայութեան առօրեայ կեանքը Նկարահանելու նպատակով: Վարուժան Արքայիսկոպոսի Եւ Նիկոսիոյ քահանայ Յօր առաջնորդութեամբ, պատշաճ արարողութիւն մը կատարուեցաւ քարուքանդ մատուցի խորանին առջեւ: Ուխտագնացները Վերանորոգելով իրենց ուխտը, գոհացած Վերադարձան իրենց տուները: Նոյն օրը Երեկոյեան, Երեսփոխանական Գրասենեակին կողմէ մամլոյ հաղորդագրութիւն մը յղուեցաւ բոլոր տեղական թերթերուն Եւ հեռատեսիլի կայաններուն:

«Յայերը Կիպրոսի Մէջ» կաւերագրական ժապաւենի ցուցադրութիւն

Յինգշաբթի, 19 Մայիս 2011-ի Երեկոյեան, Նիկոսիոյ K-Cineplex շարժապատկերի թիւ 2 սրահին մէջ, տեղի ունեցաւ Կիպրահայութեան պատմութիւնը ամփոփող «Յայերը Կիպրոսի Մէջ» պատմա-վաւերագրական անսախընթաց ժապաւենի ցուցադրութիւնը, Ներկայութեամբ մօտ 250 հոգիի: Իր տեսակին մէջ հւրայատուկ նախաձեռնութիւն մը, որու շնորհիւ Ներկաները մեծ յուզմունքով վերյիշեցին ու վայելեցին անցեալի յուշերը՝ շուրջ 50 վայրկեան տեսողութեան ընթացքին: Անգլերէն լեզուով տարբերակի պատրաստութիւնը գրեթէ աւարտած է Եւ մօտ ատենէն ձեզի տեղեակ պիտի պահենք տեսահոլովակը (DVD) ա-

պահովելու մանրամասնութիւններուն մասին:

Նարեկ Հայկական Վարժարաններու կեանքեն



Երեքաբթի, 17 Մայիս 2011-ին տեղի ունեցաւ Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի նոր հանդիսասրահի բացման պաշտօնական արարողութիւնը՝ ձեռամբ Կիպրոսի Կրթութեան Նախարար Պրև. Անտրեաս Տիմիթրիույի, Նախագահութեամբ Պետական Ներկայացուցիչ Պրև. Մահտեսեանի, օրինութեամբ Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արքեպիսկոպոսի եւ քահանայ հայրերուն, Ներկայութեամբ հայ եւ օտար պաշտօնական անձնաւորութիւններու ու ծնողներու: Պրև. Մահտեսեան իր պատգամին մէջ անդրադարձաւ հայ դպրոցին շնորհած կենսական դերակատարութեան եւ դարերու ընթացքին մեր գոյութեան հիմնաքարը հանդիսացող այս կառոյցին կարեւորութեան:

Չորեքաբթի, 18 Մայիս 2011-ին, տեղի ունեցաւ Նարեկ Վարժարաններու տարեկան մարզահանդէսը, Նախագահութեամբ Պետական Ներկայացուցիչին: Այս ձեռնարկի աւարտին, Պրև. Մահտեսեան կատարեց մետալներու

յանձնում՝ թէ առաջնակարգ դիրքերը գրաւող եւ թէ իրենց մասնակցութիւնը բերող բոլոր աշակերտներուն:



Չորեքշաբթի, 8 Յունիսի 2011ին, տեղի ունեցաւ Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի Մանկապարտեզի տարեկան հանդեսը, որուն ներկայ գտնուեցաւ Տիկին Մակի Մահտեսան:

Իսկ Չորեքշաբթի, 15 Յունիսի 2011-ին, տեղի ունեցաւ Նարեկ Վարժարաններու Նախակորթարանի եւ Միջնակարգի Ամավերջի հանդեսը, Նախագահութեամբ Պետական Ներկայացուցիչին: Յանդեսի վերջաւորութեան, Վարուժան Արքայիսկոպոս եւ Պրև. Մահտեսան կատարեցին Վկայականներու բաշխում, օգնութեամբ Վարժարանի տնօրենուի Տիկ. Վերա Թահմազեանի:

Յաջորդ Չորեքշաբթի, 22 Յունիսի 2011-ին, Նարեկի շըրջանաւարտները, տնօրենութիւնն ու ուսուցչական կազմը, ինչպէս նաև կղզիին բոլոր հայ շրջանաւարտները, ներկայութեամբ Վարուժան Արքայիսկոպոսի եւ քահանայ հայրերու, հիւրասիրուեցան Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսաններու բնակարանը:



Յիշենք, թէ այս տարի եւս, Պետական Ներկայացուցիչն նախաձեռնութեամբ եւ ծախսերով, Նարեկ Վարժարաններու Նախակրթարանի շրջանաւարտ աշակերտները, երկու ուսուցիչներու ընկերակցութեամբ, Հայաստան մեկնեցան Կիրակի, 10 Յուլիսին, երկու շաբթօւայ ժամանակաշրջանով, մասնակցելու համար «Արի Տուն» ծրագրի ժիրեն ներս կազմակերպուած շրջապտոյտին:



**Հայ Համայնքի Պետական Ներկայացուցիչի
ընտրութիւններ 22 Մայիս 2011**



Կիրակի, 22 Մայիս 2011-ին, Նարեկ Հայկական Վարժարաններու երեք քաղաքներու քուէակեդրոններուն մէջ, տեղի ունեցաւ Հայ Համայնքի Պետական Ներկայացուցիչի ընտրութիւնը: Երեկոյեան ժամը 7:30ին յստակացաւ Պիլս. Մահտեսեասի վերընտրութիւնը՝ 68% քուէներու ապահովումով: Ստորեւ, կը ներկայացնենք ընտրութիւններու քուէներու արդիւնքը եւ տոկոսային պատկերը իւրաքանչիւր քաղաքի մէջ.-

	Վարդգէս <u>Մահտեսեան</u>		Անդրանիկ <u>Աշճեան</u>	
	<u>քուէ</u>	<u>Տոկոս</u>	<u>քուէ</u>	<u>Տոկոս</u>
Նիկոսիա (2 կեդրոն)	717	67%	353	33%
Լառնաքա	220	69%	101	31%
Լիմասոլ	168	69%	74	31%
Ընդհանուր քուէ	1,105	68%	528	32%

Ընտրութեան պաշտօնական արդիւնքներու յայտարարութեան արարողութենէն Ետք, Պրն. Վարդգես Մահտեսեան ժամանելով ՀԵՍ-Հ.Ս.Ը.Ա.-ի մարզադաշտ, սկիզբ առաւ հրապարակային խնճոյքը, այս առթիւ ՊԵյրութեն յատկապէս հրաւիրուած երգիչին խանդավառ երգերու մեկնաբանութեամբ, որ տեւեց մինչեւ առաւօտեան կանուխ ժամերը, Ներկայութեամբ հոծ բազմութեան: Պրն. Մահտեսեանի նոյն գիշերուայ յայտարարութիւնը՝ «այս յաղթանակը կը պատկանի բոլորիս», եկաւ ապացուցելու, թէ Կիպրահայութիւնը մեկ ամբողջութիւն է եւ պիտի շարունակէ համերաշխութեամբ գոյատեւել ու բարգաւաճիլ՝ ի շահ գալիք սերունդներու բարօրութեան:

Պետական Ներկայացուցիչ Վարդգես Մահտեսեանի այցը Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառին

Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչի պաշտօնին համար Վերընտրուած Պրն. Վարդգես Մահտեսեան, 11 Յուլիս 2011-ին, տեսակցութիւն մը ունեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին հետ, ընկերակցութեամբ Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Սրբազնին եւ Թեմական ժողովի ատելապէտ Պրն. Սեպուհ Դալիթեանին:



Այս այցելութեան նպատակն էր լուսաբանել Վեհափառ Հայրը՝ Պետական Ներկայացուցիչի ընտրութիւններուն նախօրեակի իրադարձութիւններուն մասին: Հանդիպումի վերջաւորութեան, Վեհափառը իր օրինութիւնը տալով շնորհաւորեց Պրն. Մահտեսեանը անոր վերընտրութեան առիթով ու մաղթեց, որ գործակցական ոգիով ու միասնաբար քննելով հետապնդել Հայ համայնքին հետ առնչուող հարցերը:

Պետական Ներկայացուցիչը ու իր տիկինը, այցելութիւն մը տուին նաեւ «Ազդակ»ի խմբագրատուն, ծանօթանալու թերթի տարրեր բնոյթի աշխատանքներուն: Պրն. Մահտեսեան գնահատեց «Ազդակ»ի երկար տարիներու առաքելութիւնը եւ հարցազրոյց մը ունեցաւ թերթին հետ, Կիպրահայ համայնքի վերջին զարգացումներուն կապակցութեամբ:

Օգտագործելով իրենց Լիբանան այցելութեան առիթը, Տէր եւ Տիկին Վարդգես Մահտեսեան, Ներկայ գտնուեցան նաեւ Համազգայինի «Քնար» պարախումբի տարեկան Ելոյթին:

Պաշտօնական մակարդակի հանդիպումներ

Ծաբաթ, 7 Մայիս 2011ին, Պրն. Վարդգես Մահտեսեան Ներկայ գտնուեցաւ Լիտրա Բալասի մօտ գտնուող Սարկոս Տրակու պողոտայի եւ Հայկական հին գերեզմանատան նորոգութեան աւարտման առիթով, Նիկոսիոյ Քաղաքապետ Տիկ. Էլենի Մաւրույին յանձնումի պաշտօնական արարողութեան:

Երեքշաբթի, 21 Յունիս 2011ին, Պետական Ներկայացուցիչը տեսակցութիւն մը ունեցաւ Կիպրոսի Պետական Համալսարանի Ռեկտոր Կոստանդիինոս Խրիստոֆիտիսին հետ, կրթական նոր տարեշրջանի Հայերեն լեզուի դասընթացըներուն եւ այլ հարցերու կապակցութեամբ:

Կիպրահայ գաղութի կեանքեն

Հինգշաբթի, 5 Մայիս 2011ին, Պետական Ներկայացուցիչը Թեսմիս Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արքայիսկոպոսի թելադրանքով եւ ընկերակցութեամբ, Ներկայ գտնուեցաւ Յայկական Բարեգործական Ընդհանուր Սիութեան Լառնաքայի մասնաճիւղի Նախաձեռնութեամբ կազմակերպուած Յայկական Մշակութային Կեդրոնի բացման արարողութեան, որ տեղի ունեցաւ ձեռամբ Ն.Վ. Կիպրոսի Յանրապետութեան Նախագահ Տիմիթրիս Խրիստոֆիասի:

Ուրբաթ, 6 Մայիս 2011ին, Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեաններ Ներկայ գտնուեցան Յամազգայինի «Սիփան» պարախումբի տարեկան Ելոյթին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Բալաս սրահին մէջ, հովանաւորութեամբ Կըրթութեան եւ Մշակոյթի Նախարար Անտրեաս Տիմիթրիույի եւ Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացուցչի: Նախքան Ելոյթը, Յամազգայինի Վարչութեան ատենապետ Ասուր Գարակիլլեան բեմ հրաւիրելով Պետական Ներկայացուցիչը, Վարչութեան անունով անոր յանձնեց յուշանուեր մը՝ առ ի Երախտագիտութիւն մասնաճիւղին հանդեպ Պրև. Մահտեսեանի բերած յարատեւ աջակցութեան:

Ծաբաթ, 7 Մայիս 2011ին, Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեաններ Ներկայ գտնուեցան Յայ Աւետարանական Եկեղեցւոյ պաշտամութիւն: Օրուան պատգամաբերն էր Վերապատուելի Սիհրան ճիզմեճեան:

Կիրակի, 15 Մայիս 2011ին, Պետական Ներկայացուցիչը ու իր տիկիննը Ներկայ գտնուեցան «Սիփան» պարախումբի Ելոյթին, որ տեղի ունեցաւ Լառնաքայի Զաղաքապետարանի սրահին մէջ:

Ուրբաթ, 27 Մայիս 2011ին, Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեաններ Ներկայ գտնուեցան ՅՅԴ Կիպրոսի մարմինի եւ յարակից միութիւններու կազմակերպած Մայիս

28ի տօնակատարութեան, որ տեղի ունեցաւ Փասիտի սրահին մէջ:

Չորեքշաբթի, 1 Յունիս 2011ին, Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեաններ Ներկայ գտնուեցան New Hope յատուկ դպրոցի ամավերջի հանդեսին:



Ուրբաթ, 3 Յունիս 2011ին, Պետական Ներկայացուցիչը ու իր տիկինը Ներկայ գտնուեցան Վարդգես Արքեպիսկոպոսի խմբագրած Երեք հատորներու շնորհահանդես-գինեձօնին, որ տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի «Իւթիւնեան» սրահին մէջ: Օրուան բանախօսն էր Պրև. Եղիա Գայայեան, որ Սրբազն Յօր հետ աշխատած էր այս իրատարակութիւններու պատրաստութեան համար: Միջոցառումը կը վայելէր Տիկին Մակի Մահտեսեանի հովանաւորութիւնը:

Ճարաթ, 18 Յունիս 2011ին, Կիպրոսի Յայ Աւետարանական Եկեղեցւոյ պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Տիար Յրայր ճեպէճեանի, այցելեցին Տեր եւ Տիկ. Վարդգես Մահտեսեաններուն քնակարանը, շնորհաւորելու Պրև. Մահտեսեանին վերընտրութիւնը եւ մօտեն գրուցելու Կիպրոսի Յայ Աւետարանական Եկեղեցւոյ հետ առնչուող զանազան հարցերու շուրջ:



Նոյն օրը, երեկոյեան, Պետական Ներկայացուցիչը եւ իր տիկինը Ներկայ գտնութեցան Լառնաքարյի Յայ Ակումբի կազմակերպած Յայրերու օրուայ հանդիսութեան: Օրուան խորհուրդը փոխանցեց, Նարեկ Յայկական Վարժարաններու տնօրինութիւն Տիկին Վերա Թահմազեան:

Յինգաշաբթի, 23 Յունիս 2011ին, Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեաններ Ներկայ գտնութեցան Կիպրոսի Յայ Դատի Յանձնախումբի կազմակերպած «Թուրքիան ընտրութիւններէն ետք» դասախոսութեան, որ տեղի ունեցաւ Յայ Երիտասարդաց ակումբին մէջ: Օրուայ բանախօսն էր՝ Կիպրոսի Պետական Յամալսարանի Թրքերէնի եւ միջարեւելագիտութեան ամպիոնի Փոռֆ. Նիազի Զիզիլեուրէ:

Ծնորհաւորագիր

Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչ Պրև. Վարդգես Մահտեսեան, 19 Ապրիլ 2011 թուակիր զոյգ գիրերով, իր Հայութաւորութիւնները փոխանցեց Նաթաշա Թաւուքճեանին՝ «Կես Յայ Լ.Ա.ի մէջ» թատերական իր առաջին փորձին առիթով եւ Յամազգայինի «Օշական» մասնաճիւղին, Յայ Մշակոյթի պահպանման ու տարածման ոլորտներէն Ներս Վարչութիւններուն տարած աշխատանքին կապակցութեամբ:



Ծանօթանակը Կիպրոսի Հանրապետութեան Օրէնքներուն

Օտարահպատակներու Եւ Ներգաղթի
Բաժանմունք

Ինքնութեան Թուղթ ոչ-Կիպրացիներու
Identity Cards for non Cypriots

Օտարահպատակներու Եւ Ներգաղթի Բաժանմունքը (Aliens and Immigration Unit) կը տեղեկացնէ, թէ յետ այսու, Կիպրական Ինքնութեան Թուղթ (I.D. card) պիտի չտայ Երրորդ Երկրի քաղաքացիներուն Եւ Եւրոմիութեան անդամ Երկիրներու հպատակներուն, որոնք Կիպրոս օրինաւոր կեցութիւն հաստատած են:

Երրորդ Երկիրներու քաղաքացիներ

Ըստ Եւրոպական Միութեան ցուցմունքին, բոլոր Եւրոմիութեան անդամ Երկիրները պիտի որդեգրեն կենսատուեալներով (biometric data) նոր ու միաձեւ կեցութեան արտօնագիրի տեսակ: Մինչեւ այս տարուայ Վերջաւորութեան, օտարահպատակները պիտի կարենան դիմում կատարել ստանալու նոր կեցութեան արտօնագիրներ: Բաժանմունքը յատուկ յայտարարութեամբ մը, տեղեակ պիտի պահէ դիմումնագիրներու հրատարակութեան մասին, Երբ

պատրաստ ըլլան անոնք: Մինչեւ այդ, օտար քաղաքացիները պետք է գործածեն իրենց Օտարահպատակներու Արձանագրութեանց Հաստատագիրները (ARC կամ Alien Book), կեցութեան արտօնագիրին (Residence permit) հետ միասին:

Եւրոպական Միութեան քաղաքացիներ

Եւրոպական Միութեան քաղաքացիներուն օրինաւոր կեցութիւնը կ'ապահովուի արձանագրութեան հրամանով (MEU1 - yellow slip), իսկ իրենց ընտանեկան անդամներունը, որոնք Եւրոպական երկրի քաղաքացի չեն, կեցութեան հրամանով (MEU2A - yellow slip) կամ մշտական կեցութեան հրամանով (MEU3 - yellow slip).

Ըստ պահանջեալ հարկին, փոխան նախապէս տրուած ինքնութեան թուղթին, կարելի է նամակ մը ապահովել Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքն, որ կը հաստատէ տուեալ անձին ինքնութիւնը՝ համազօր իր ունեցած կեցութեան հրամանին: Այս վերջինը, կարելի է օգտագործել կառավարական բաժանմունքներու, դրամատնային եւ այլ սպասարկութիւններու գործողութիւններու ընթացքին:

Ճեշտենք, թէ նոր կեցութեան հրամանն ալ, նախկինին նման, չի կրնար գործածուիլ որպէս ճամբորդական փաստաթուղթ (Travel Document):

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ - ԵՐԿԱՅԱՑՄՈՒԹՅՈՒՆԻ ՏՈՒ
ՎԱՐԴԱԲ ՄԱՅՏԵՍԵԱՆ Կիպրահայ Համայնքի Ներկայացուցիչ



REPUBLIC OF CYPRUS - HOUSE OF REPRESENTATIVES
VARTKES MAHDESSIAN Representative of the Armenian Community

ԿΥΠΡΙΑΚΗ ΔΗΜΟΚΡΑΤΙΑ - ΒΟΥΛΗ ΤΩΝ ΑΝΤΙΠΡΟΣΩΠΩΝ
ΒΑΡΤΚΕΣ ΜΑΧΤΕΣΙΑΝ Εκπρόσωπος της Αρμενικής Κοινότητας

PRNM 03/11

24.05.2011

Ընդհակալագիր

Սոյն գրութեամբ կը փափաքիմ սրտազին շնորհակալութիւնս յայտնել Կիպրահայ գաղութի բոլոր անդամներուն անխտիր, որոնց իրենց մասնակցութիւնը բերին Կիրակի, 22 Մայիս 2011-ի Կիպրոսի մէջ կայացած Խորհրդարանական Ըստրութիւններուն:

Երախտագիտութիւնս կը յայտնեմ նաեւ բոլոր անոնց, որոնց անձամբ, հետաձայնային հաղորդակցութեամբ կամ ե-նամակներով շնորհաւորեցին վերըստորութիւնս, որպէս Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ:

Իմ կարգիս, կը խօստանամ թօախնդրօրեն ու նոյն թափով շարունակել ինժի վստահուած պարտականութիւնը, բոլոր կարելիութիւններս ի սպաս դնելով գաղութիս ընդհանրական շահերուն:

Կը հաւատամ, թէ այս յաջորդութիւնը միակողմանի չէ եւ կը պատկանի բոլորին: Քննեաբար, միանարար պիտի շարունակենք աշխատիլ նոյն համերաշխական ոգինով՝ ի սպաս մեր համայնքի բարորութեան:

Անկեղծութեամբ՝

Վ.Մ.Լ

Կարդգեն Սահմանական
Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ

ՈՒԾԱԴՐՈՒԹԻՒՆ

Ամառուայ արձակուրդի շղանին,
 Երեսփոխանական Գրասենեակը
 փակ պիտի մնայ
 Երկուշաբթի, 8 Օգոստոսէն
 մինչեւ
 Կիրակի, 28 Օգոստոս 2011-ը:

ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos
 Հեռախոս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42
 Ել. Հասցե office@armenianmp.com
 Ուստայնեց՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia
 Հեռախոս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42
 Ել. Հասցե vmahdessian@parliament.cy